ՊՈՍՏԱՐԿԴ.

Մոսկուա. *Էմմ. Ք. Ն.-ին. Ստացանք «Լև Տոլստոյի մի նոր նամակը», որը նախորդ յօդուածի հետ կըտպուի յաջորդ համարում։ Ճանապարհածախք պահանջուում է միայն պատահական յօդուածագիրներից։*

Շուշի. *Ա. Տ. Գ.-ին. Չենք կարող տպել Ձեր թարգմանած «Վ. Ա. Լայի Զեռնարկ թուաբանութեան»։*

Ռոստով Դ|վ. *Ն. Ք. Հ.-ին. Չի տպուիլ Ձեր «բաց նամակը Նոր Նախիջևանի հայ-Լուս. եկեղեցիների բարեկրօն քահանաներին»։*

Բալախանի. *Ղ. Ք. Ց.-ին. Յօդուածը չկարդացած չենք կարող ասել կը տպուի, թէ ոչ։ Կարդացէք նախորդ երկու համարներում տպուած յայտարարութիւնը «Խմբագրութեան կողմից»։*

Կարս. *Գ. Ք. Ն.-ին. Միջոց չունենալով Ձեր հաւաքած դաղափարանիշերը ձուլել տալու, չենք կարող տպել Ձեր աշխատանքը։*

Բաղա գիւղացի պ. Գ. Արարաջեանին։ *Չի տպուիլ Ձեր ուշացած պատասխանը Բաջբերունու 1910 թ. «Արարատում» տպուած յօդուածին, որի հակառակ պնդում էք, թէ Բարվանսարայ գիւղացիք Ձեզ, կողոպտուած Բաղացիներից, աւելի քան 250 հոգու, սիրալիր վերաբերմունք են ցոյց տուել։*

Սամարղանդ. *Սմբ. քահ. Սարգսեանցին։ Ձեր առաջարկը՝ հայ տպագրութեան 400-ամեայ յոբելեանին հրատարակել աշխարհաբար Աւետարան՝ յարուցուած է նոր Վեհափառութեան կազմած յանձնաժողովի մէջ. բայց գործի դժուարութեան պատճառով առ ժամանակ անիրագործելի է համարուած։ Անշուշտ ժամանակ է հոգալ այդ մասին։*